

# ԳՐԻԳՈՐ ԱՆԱՒՐՉԵՅԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ «ՃՐԱԳԱԼՈՒՑԻՆ ՄԿՐՏՈՒԹԵԱՆ»<sup>1</sup> ԿԱՆՈՆԸ

ԳԷՈՐԳ ՄԱԴՈՅԵԱՆ

Լրացաւ Գրիգոր կ. Անաւարգեցի կաթողիկոսի (1293—1307) հայրապետական աթոռին բարձրանալու 700ամեակը: Սոոյ առաջին կաթողիկոսը ոչ միայն լայնախոհ քաղաքական գործիչ էր, այլև օժտուած էր բազում աստուածատուր ձիրքերով: Մեզ են հասել նրա դրուատները, Յայսմատորքը՝ ինամքով խմբագրուած, եւ մէկական տաղ եւ նուագ: Բացի այս, Հայր Ղեւոնդ Ալիշանը յիշտակում է նրա հեղինակութեան 33 կանոն շարական<sup>2</sup>: Դրանցից լոկ հինգն են յայտնի (նաեւ մէկ Մանկունք եւ երեք Մեծացուացէ) եւ հրատարակուած են Սահակ վարդապետ Ամատունու գրքում<sup>3</sup>:

Վերջերս մենք յայտնաբերեցինք Անաւարգեցու եւս ութ ամբողջական կանոն, այդ թւում եւ «Ճրագալուցի մկրտութեանն» երգաշարը, որ ցանկանում ենք այժմ ներկայացնել: Կանոնը արտագրուած է Երեւանի Մեսրոպ Մաշտոցի անուան Մատենադարանի համար 732 ժողովածուի 37ա—45ա էջերից եւ հազիւ ընթեռնելի է մերանի գունաթափման պատճառով<sup>4</sup>: Անաւարգեցու շատ գործերի պէս, ներկայ կանոնը եւս բանակապ ունի. «Մկրտութեանն Քրիստոսի բան երգս» (Կարգը բաղկացած է 31 տնից. եզրակապում հանուած են աւելորդ տառերը): Բանակապից երեւում է, որ միջնադարում չի գիտակցուել Փրկչի անունների տարրերութիւնը: Միայն յետագայում ուսումնասիրողները պարզեցին, թէ Յիսուսը գործածում է Որդու երկրային գործերը յիշելիս, իսկ Քրիստոս՝ աստուածային արարքների ժամանակ: Երեւոյթը առկայ է եւ կանոնի երգերում:

Կանոնի 7 շարականներից 4ը գրուած են յանգի եւ չափի նուրբ զգացողութեամբ, որ յատուկ է Անաւարգեցուն, սակայն մենք չենք կարող դրանք բանաստեղծութիւն անուանել: Զկայ Մանուկ Աբեղեանի ասած «Հոգու թռիչք»ը: Նոյն պատկերն է նաեւ «Թլիփատութեան» եւ նորայայտ՝ «Ծննդեան Ա եւ Բ աւուր» կանոնների պարագայում, եւ պատճառը Սուրբ Գրքի կաղապարն է, որ հեղինակը չի կարող եւ չի ուզում խախտել: Դժուար չէ զգալ, թէ ինչպէս կը մեկնաբանուէր միջնադարում անգամ չնշին շեղումը Աստուածաշնչից: Դրա համար շարականներում հանդիպող բազմաթիւ արտայայտութիւններ եւ մտքեր Սուրբ Գրքից են փոխ առնուած. յատկապէս աստուածաշնչեան տեսարանները վերարտադրող շարականները եղբեմն բառացի կրկնութիւն են.

Պատրաստ լէ՛ր, գետ Յորդանան,  
Եւ Յովհաննէս յաջորդեա,

Գոչեա. «Պատրաստ արարէք.  
Զճանապարհ Տեառն ուղղեցէք»

Կամ՝

Տեսեալ Յովիաննես  
Գոչեաց մեծապէս  
«Ճանապարհ պատրաստ առնել  
Եւ ըզշախդու Տեառն ուղղել»<sup>6</sup>:

Այս է պատճառը, որ մեր լաւագոյն շարականները ոչ թէ տէրունական տօներին նույլուածներն են, այլ տարբեր սրբերի յիշատակին հիւսուած երգերը, ուր հեղինակը համեմատաբար զերծ է սահմանափակումից: Առանց վէճերի, միշտ բարձր են գնահատուել ի. դարի կաթողիկոս Կոմիտաս Աղցեցու «Անձինք Նույլեալք»ը, Ժ. դարի կաթողիկոս Ներսէս Շնորհալու «Նորահրաշ»ը,<sup>8</sup> Գրիգոր Անաւարզեցու «Գէորգ զօրավար» կանոնը, որոնցում հեղինակները փառաբանում են քրիստոնէական հաւատի համար մարտիրոսուածներին:

Կանոնի առաջին եւ երկրորդ շարականները, որոնցից վերեւում մէկական տուն էինք քաղել, լուսանցքում միայն ԲԶ գրանցումն ունեն: Լոկ ձայնն է գրանցուած երրորդ շարականի դիմաց, որ յանդի ու չափի տեսակէտից զիջում է նախորդ երկուսին.

Երկիր Զարուղովնի Նեփքաղիմաւ ըզծագում քո լոյս աւետիս<sup>(9)</sup>,  
Անասպատն Յորդանանու ցընծալ հըրաւիրի,  
Որ ըզքեզ եկեալ յաջորդի:

Մի պահ թւում է, թէ առաջին տողը ընդհանրապէս յանդաւորուած չէ, սակայն յիշենք, որ տունը գրուած չէ արտասանութեան համար. այն պէտք է երգուէր: Երաժշտութեան հետ նոյնիսկ անյանգ խօսքը կարող է որպէս յանդաւոր ընկայուել, երբ անհրաժեշտ հնչիւնը, ի տարբերութիւն միւսների, աւելի երկար եւ շեշտուած է արտասանուում: Անչուշտ, շարականը կատարելիս Անաւարզեցին «աւատիս»ին այնպէս կը հնչեցնէր, որ լուղների համար ներդաշնակ կը լինէր «աւետիս, հըրաւիրի, յաջորդի» բառերի շարքը:

Լուսանցքի Գ(ործատուն) գրանցմանը հետեւում է Մեծ(ացուսցէ) նշումը, սակայն Անաւարզեցին այս կանոնի համար Մեծացուսցէ շարականներ չի յօրինել: Տողում կարդում ենք հետեւեալը. «Ծագումն հրաշ[ալի] Ծագումն. Առքեզ ապ[աւինիմք]: Դրանք «Աստուածայայտնութեան ճրագալուցի» կանոնի (այժմ եւս արարողութիւնների ժամանակ երգուող) Մանկունք ԴԶ կարգի Յ տների առաջին բառերն են: Այսինքն հեղինակը Աստուածածնին փառարանելու համար այս տներն էր երգուում: Յայտնի է, որ իւրաքանչիւր կարդ Աստուածաշնչի որոշակի տողերից է ծագում: Բացառութիւն չէ եւ Մանկունքը. «Օրհնեցէք, մանկունք, զԾէր եւ Օրհնեցէք զանուն Տեառն», որ բնական է, չի կարող նոյնանալ Մեծացուսցէի հետ<sup>10</sup>: Մանկունքը, որի մասին խօսում ենք, իրականում Տիրամօր Օրհնութիւնն է.

Առ քեզ ապահնիմք ամենասրբուիի  
Գերագոյն եւ հրաշալի եւ բաշխող բարութեանց...<sup>11</sup>

Հետաքրքիր է, որ Շարակնոցի Մեծացուացէների ցուցակում գտնում ենք այս նոյն Մանկունքի տարրերակ-սկզբնատողը:<sup>12</sup> Բացատրութիւն գտնելը շատ դժուար է, որովհետեւ, յանձինս շարականների, գործ ունենք մի հսկայական շինութեան հետ՝ հատուածարար եւ տարրեր դարաշըջաններում կառուցուած:

Կանոնի մասին վերեւում նշեցինք, որ այստեղ չկայ պատկերաւոր մտածողութեան եւ ոչ մի նշով: Բայց եթէ զնահատելոր փորձեր անենք, գուցէ բաւական է լիշել երգերի 700ամեայ վաղեմութիւնը:

Անաւարզեցին բազմիցս ենթարկուել է, յաճախ անտեղի, թէ՛ ժամանակակիցների, թէ՛ յետագայ ուսումնասիրողների քննադատութեանը: Սակայն հիմա հարկ է արժանին մատուցել հոգեւոր մեծ առաջնորդին, գրողին ու մարդուն, հիմք ունենալով ոչ թէ անստոյգ դէպքերը, այլ նրա կեանքն ու ստեղծագործութիւնը:

## ԿԱՆՈՎՆ ճՐԱԳԱԼՈՒՑԻՆ ՄԿՐՏՈՒԹԵԱՆ ՔՐԻՍՈՍԻ ԱՍՏՈՒԾՈՅ ՄԵՐՈՅ

Բ2 Պատրաստ լեր Զարուղովնի երկիր եւ Նեփաղիմայ  
Զիանու Յորդանան յաջորդեա եւ մատիր զՏերն ընդունեա:

Պատրաստ լեր, գետ Յորդանան,

Եւ Յով[ի]ամնէս յաջորդեա,

Գոչեա. «Պատրաստ արարեք.

Զճանապարհ Տեառն ուղղեցէք»:

Մի անգամ քո Յորդանան

Վրտակը զարիվէր դարձան

Ետոր անց Խորայէի

Յեսուա յալիտեանցն երկրի:

Ընդ քեզ զնորս Խորայէլ,

Յիսուս, որ Եմանուէլ

Անցուցեալ հանէ յերկին

Պատրաստեա՝ դառնալ կըրկին:

Կողմանքը Զարուղովնի,

Եւ երկիր Նեփաղիմի.

Պատրաստ լիք, ահա ծագի

Սեծ լոյս ձեզ ի խաւարի:

Ընդյառաջեա՝ Յորդանան

Ծագեալ լուսոյն ծաւալման,

Որ գայ ի Գալիլէ

Եւ զաշխարհ ի քեզ մաքրէ:

Բամեալ խորհուրդն առաջին

Քեզ Յորդանան կատարին

Ցընծալ քո անապատի  
Աւետիս տուր զի ծաղկի:  
Տեսեալ Յովհաննէս  
Գոչեաց մեծապէս  
«Ճանապարհ պատրաստ առնել  
Եւ ըզշաւէլս Տեառն ուղղել»:  
Ոչ Աղամ թագչիս,  
Մի տերեւով Եւայ ծածկիս  
Միթէ մերկ և ամաչել  
Զի գայ Քրիստոս լուսով ծածկել:  
Իիսեալ մարգարեք  
Քնար պատրաստեցէք  
Զծագումն այրն արհներգեցէք  
Եւ աւետիս մեզ հնչեցէք:  
Թաղես նոյ Աղամ  
Զմելս ի Յորդանան  
Զմաշկեղէնըն մերկանամք,  
Զգեցեալ զբեզ զիհանամք:

ԲԿ. Երկիր Զարուղովմի Նեփրադիմա ըզծագումն քո լոյս աւետիս  
Անապատն Յորդանանո ցընծալ հըրաւիրի,

Որ ըզքեզ եկեալ յաջորդի:

Այսաւր Յով[հ]աննէս քեզ ճանապարհ գոչէ պատրաստել  
Քեզ շաւէլըս Տէր առնել.

Չհոգին պատրաստել:

Նոյն եւ Եսայիս ծայնէ յանապատին Յորդանանո  
Զբարբառդ եւ զբան Հաւը ծայնին մըկրտչիմ՝ յորմէ մըկրտիս  
Տէր եւ Քրիստոս քարոզի:

Նորոգել զինացեալս,

Ի լոյս ծագել յոզիս խաւարեալս,

Ի Գալիլէ ծագիս լոյսդ հերանոսաց,

Եկեալ ի Յորդանան հաստնիս,

Հարը եւ հոգուվ վլկայիս:

Քետ ցընծամք եւ մեր ընդ անապատն Յորդանանու,

Որ ծագելով քո Հաւը ծայնին

Եւ Սուրբ Հոգույդ իշմամք պայծառ

Խբրտ շուշան այսաւր ծաղկի անդաստան:

Քամեալ ընդ բոլոր արարածոց քո[ց] ստեղծուածոց

Ծագման ճշմարիս լուսոյդ յայտնելո[ց]

Ընդառաջնմք հոգուվ

Զյայտնեալդ յոզիս ընդունել:

Հրց. ԴԶ Ի սկզբան Բանդ Աստուած մարմնով ծաղկեցար փառաւք ի Հաւը  
Սիածին Որդի յայտնեալ երեւեցար.

Արհնեալ Տէր Աստուած հարցն մերոց:

Սուրբ Աստուած սրբիչ.

Որ զմենս մաքրեցեր  
Գաս մարմնով մաքրիլ[չ"] հոր ծախիչ.  
Որ զՅովհաննէս նախ սըրբեցեր.  
Արինեալ Տէր Աստղած հարցն մերոց:  
Տէր, որ գԵսայեայ շըրքունս մաքրեալ  
Զմեղսըն սըրեցեր.

Կայծակն երեւեալ  
Գաս ըզմեղաց հոսանս ի ջուրս կիզել.  
Արինեալ Տէր Աստղած հարցն մերոց:  
ԸզՏէր Արինեցեր, բարձր արարէք ըզնա յաւիտեան:  
Որսայ [որս Աստուծոյ] Աստուծ մեր կանխածայնէ[՞]  
բարոր ի յերկրի երեւեալ շըրջի

Եւ ընդ մարդկան օայ մըկըրտել.  
Բարձր արարէք ըզնա յաւիտեան:  
Սպասեալ Յով[հ]աննէս կայր ի Հաւրէ լրւեալ,  
զոր ետև եկեալ

Զայն բառնայր ի քէն մըկըրտել.  
Բարձր արարէք ըզնա յաւիտեան:  
Ի Գալիլէ ի Յորդանան եկեալ, զորս անդ ժողովեալ  
Զպարսեալսն առ Յով[հ]աննէս լրսատորէ զիոզիս.  
Բարձր արարէք ըզնա յաւիտեան:

Մ[եծացուցէ] Ծագումն իրաշ[ալի]: Ծագումն: *Առ թեզ ապ[ալինիմք]:*  
Ո[ղորմեալ] Բանդ, որ մարմնով երեւեցար

Մերս հոգուվ արդարացեալ,  
Գաս՝ երեւելի փառակցաց,  
Հաւատարիմ անփորձ մեղաց  
Զբնութիւնըս մեր փորկել  
Զհայրն չարեաց դատայպարտել,  
Որով եւ մեր արինարանեմք,

Ծագման Քրիստոս Տէր երկրպագեմք:  
Անճառ ծածկեալ լոյսդ ի մարմնի  
Գաս ի ծագել զնշշոյլ շնորհի  
Չքանեալ ի ջուրս ըզթշնամին  
Գաս ըմբռնել անդէն ի նմին  
Փշշրել խոնարհութեամք.  
Որով եւ մեր արինարանեմք,  
Ծագման Քրիստոս Տէր երկրպագեմք:

Նմանութեամք մարմնոյ մեղաց  
Սիայն ամքիծդ ի յանցանաց  
Ընդ զգացեալ մեղուցելոցն  
Ի Յովաննէ մըկըրտելոցն,  
Անմեղի ընդ մեր մաքրիլ,  
Որպէս կարաւտ գաս մըկըրտիլ.

Որով եւ մեք ալիհնաբանեմք,  
Ծագման Քրիստոս Տէր երկրպագեմք:  
Վիշապին զգլուխ՝ սկիզբն չարեաց.  
Չհպարտութեանն ախտ յանցանաց.  
Ի վերալլ [շնորհ] յսնարդութեամբ,  
Ի ծառայեն մըկրտութեամբ  
Փղշրեալ խորտակե[ցեր]  
Եւ զընկդմեալս վեր ածեր.  
Որով եւ մեք ալիհնաբանեմք,  
Ծագման Քրիստոս Տէր երկրպագեմք:  
Տէր Յերկնից] Երկնի հրեշտակը ամեներեան  
Պատրաստեցէք երգս ալիհնութեան,  
Եւ Յորդանան, դոր պատրաստ լեր՝  
Քանզի Քրիստոս գայ մըկրտել,  
Չուրք զվիշապին լզգլուխ փղշրել  
Եւ զգտիեզերս ի քեզ մազրել:  
Ռոտեալ մաշկեակ քեզ բաժանեաց  
Ոչխարն որչափ ինչ ներգործեաց[^].  
Զի զմեղաց գետ պատառէ,  
Բաց յաշխարհէ ի յսրու հոսէ,  
Որում է ծով կաթի դուլէ[^].  
Չլերինս եւ բլուրս կշռեալ չափէ:  
Գոչեալ եւ դոր, զոր ծանուցէր  
Զգառն, որ յարգանդ երկըրպագեր,  
Ըզնայ պ[ատրաստ] եա արդ Յով[հ]աննէս  
Զեռամբ ի ջուրք շաւշափել,  
Փուրա մի՛ հրաժարել,  
Զի գայ զբնութիւնն օր սրբել:  
Սպասել պատրաստութեամբ  
Յայտնութեան օր Տէր մաքրութեամբ  
Զմեզ զանարժանըս արժանացոյց,  
Ժամանելով արդ զորացոյց,  
Ըզսիրս պատրաստել քեզ ճանապարհ  
Յոզիս առնել Հարք [անընք.]  
Եւ Հոգով զեկեալդ ալիհնել,  
Փառք ի բարձունս երգել:

## ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

1. Ծրագալուցի կոչում «զի երգի՝ ի հսկման ա[ստուա]ծայայտնութե[ան], այ[սինքն] յատում» որ յառաջ քան զոօն ա[ստուա]ծայայտնութե[ան]: Բառն Ծրագալուց առեալ է՝ ի յունաց, յորմէ և լատինացիք կոչեն լուչենա՛ղում. այ[սինքն] ծրագաց, կամ ծրագավառ. որով նորա իմանան սովորաբար զերեկոյեան ժամակարգութիւնն. զի առ հինսն կատարիր մօտ ՚ի մութն երեկոյին լուցնամք ծրագացն», Հայր Գաբրիէլ Աւետիքեան, *Բացադրութիւն շաբականաց*, Վենետիկ, 1814, էջ 44:
2. Հայր Դեւոն Ալիշան, *Միտուան և Լեռն Սեծագողծ*, Վենետիկ, 1885, էջ 242:
3. Սահակ Վարդապետ Ամատունի, *Հիմ և Առ պարականն կամ անվաւեր շաբականակը*, Վաղարշապատ, 1911, էջ 46: Ամատունին դրանցից ոչ բոլորն է Վերագրում Անաւարդեցուն: Նոյն տեղում, մասնաւորապես «Հարական սրբոյն Գեղորգայ օրավարին» կանոնի մասին, նա գրում է. «... շարականներին գրութիւնը շատ հեռու է Անաւարդեցու կոչու և պլոշու լեզուից. կարդա համար 6»: Սակայն Ամատունին չի նկատել մի կարեւոր նմանութիւն. Անաւարդեցին յաճախ կանոնի մի կամ մի քանի շարական աւարտում է Աստուածածնի փառաբանութեամբ: Տես՝ «Ժղվատութեան» կանոնը (որ Ամատունու ասած «համար 6-ն է» Օրին[նութիւն] թի. տուն 7, Ռիդունա), տուն 4., և «Գեղորգ Զօրավար»ին Օրին[նութիւն] թի. տուն 6 և տուն 11: Նման օրինակներ կան հեղինակի այլ շաբականներում եւս:
4. Զեռագրի մասին տես՝ *Ցուցակ Զեռագրաց Մաշկոցի Անուան Մագիենադարասի, կազմեցին Օ. Եզանեան, Ա. Ջերոմեցեան, Փ. Այմբարեան, հասոր Ա., Երեւան, 1965, սինակ 395–396:*
5. Տես՝ հրապարակուող կանոնի Տեր Յերեկնիցի առաջին տունը:
6. Հմմոն՝ *Աստուածածնի Խո. Խ-3, Մատք. Գ-3, Մարկ. Ա-3, Ղուկ. Գ-4, Յովի. Ա-23; Եսայի մարգարեն այս շարքի մէջ ընդգծում է նրանով, որ նախապես էր գուշակել Յիշուսի մկրտութեղը, տեսել էր լոյսը՝ նախքան լոյսը կը գար: Նման գուշակութիւնների համար մէր նախմիները մարգարեներին համեմատել են վառուած ծրագմերի հետ, «որք նշանակն զայոս ծագումն մարգարեցից յառաջ քան զերեւել Արեգականն արդարութեամ».*, *Բացադրութիւն*, էջ 44:
7. Այն նուիրուած է Հռիփիսիմեանց կոյսերին:
8. Այն նուիրուած է Աւարայրի մարտիրոսներին:
9. *Շարական հոգեւոր երգոց*, Երուսաղէմ, 1936, էջ 36:
10. *Աստուածածնն Մագիեան*, Վիեննա, 1929, «Սաղմոսաց» ՇԺԲ (ՇԺԳ), էջ 644:
11. Համարում է, որ «Աստուածայայտնութեան ծրագալուցի» կանոնի հեղինակը Մովկես Խորենացին է, բայց Հայր Գաբրիէլ Վարդապետ Աւետիքեանը յիշում է նաև Վարդապետի խօսքերը. «... սակայն Վարդան Վարդապետ ՚ի տեսութեան Անքառան ծաղկին՝ Երկրայական ոճով յիշէ զայս, ասելով՝ եթէ Սովուս Խորենացին ասաց, եւ կամ մեծ ճգնաւորն Բարսեղ Շոն». *Բացադրութիւն*, էջ 45:
12. *Շարական*, էջ 1023. այստեղ այս յիշում է «Ի թեզ եմք ապահնեալ» ձեւով:

## THE CANNON OF "CANDLE LIGHT BAPTISM"

Written by Grigor Anavarzetsi  
(Summary)

GEVORG MADOYAN

Catholicos Grigor Anavarzetsi, who lead the Armenian church between 1293 and 1307, was not only a circumspect political actor but a talented author as well. Though he had authored over 33 canonized Sharakans, only five of them are known to scholars. The author has uncovered 8 heretofore unknown canons of catholicos Anavarzetsi one of which is the candle-light baptism canon; this he has copied from a manuscript stored in the Mashtots Matenadaran of Erevan.

The cannon consists of 31 verses which constitute 7 sharakans. According to the author, these Sharakans can not be considered poetry in the full sense of the word, because most of the best Armenian Sharakans are those which have little to do with biblical events and ceremonies, since the authors do not find themselves restrained with a set of fixed terminology and scenery.